



**ՎԵՀԱՓՈԽ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ**  
 1975 ԹՎ.ԱԿԱՆԸ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ  
 ԵՎ ԱՄԵՆՍՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԻԼԻԿՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԸ  
 ՈԳԵԿՈՉԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՎԱԶԳԵՆ ՇԱՌՈՍՅ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ,  
 ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՈՔՆ ԱԶԳԻՒ,  
 ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈղԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,  
 ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք ՀԱՄԱԶԳԱԿԱՆ  
 ՆԱԽԱՄԵՇԱՐ ԱԹՈՈՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ  
 ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ  
 ԷջՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՆԴ ՄԻՐՈՅ ՈՂԶՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ  
 ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆ ԿԻԼԻԿՅՈՅ  
 S. S. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՈՅՅ, ՊԱՏՐԻԱՐքԻՆ ՀԱՅՈՑ ՄՐԲՈՅ  
 ԵՐՈՒՍԱԼԵՄԻ Տ. ԵՂԻԾԵՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐքԻՆ  
 ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՈՒՊՈԼՅՈՅ Տ. ԸՆՈՐՃԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,  
 ՀԱՄՈՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,  
 ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍՍԿԱԿԱՆԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ  
 ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՃՐՈՅ ԵՒ ՊԱԾՏՆԵՒՅ  
 ԵՒ ՄԻՐԵՑՆԱՅ, ՀԱՄԱՅՆ ՀԱԽԱՏՈՒՑԵԱՅ, ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Փրկել զմեզ ի բերանոյ առիծուց, ազատել զգերեալս ի տանէ կրպա-  
 նաց և դարձուցանել զամնենան բաշխարհն նայրեն»:  
 Ա. Ներսէս Շնորհալի

Հայաստանեաց եկեղեցու և ժողովրդի բազմադարեան պատմոթիւնը  
 պատաշարժ դիցագներգործիւնն է նրա ապրելու սրբազն կրքի ու նրա  
 ստեղծարար ոժերի: Յաճախ, նոյնիսկ արտաքին մահացու հարուածների

տակ, վերջնական փրազում բուացող վախճանը, դարձել է նոր կեանիք սիհքը, որով նայ ժողովորդը տառապանիք ազնի լուսապասարը ճակատին շարունակել է գոյատևել, մարտնչել ու լառնել իր խոկ աւերակներից:

Արախիսն է եղել մեր եկեղեցոյ պատմոթեան նաև կիլիկեան Հայաստանի շրջանը, երբ այսուել է փոխադրուել ու գործել աւելի քան երեք դար մեր եկեղեցու կենտրոնն է՝ Ամենայն Հայոց հայրապետական Մայր Արքուն:

Ժողովորդների պատմոթեան մէջ, գործել եղակի երեսոյ է, որ անդունի եղին հասած մի փոքր ազգութիւն, իր պատմական հայրենիքց Բենոյ, մի այլ հողամասի վրայ, կարողացել է հիմնել մի նոր ազգային իշխանութիւն, որ և փոխադրելով իր եկեղեցու գերագոյն կենտրոնը, դարեր շարունակ գոյատևել, գործել ու զարգացրել է իր հոգեւոր և մշակութային կեանքը, ապա վերադառնալու համար իր պատմական հողամասի վրայ, նոր վերածունդի տեսիլքով առցուն:

Այսպէս է որ Բագրատունեաց Հայաստանի անկումից յետոյ, մեր եկեղեցոյ պատմոթեան կիլիկեան ժամանակաշրջանը, մինչեւ 1441 բուական համեմիսացել է մի ճշմարիտ՝ հոգեւոր ու մշակութային վերածունդ:

Արեւուտքից ու ապա արեւելքից կրած ահաւոր հարուածներից, հոգեվարքի մէջ տուայտող նայ եկեղեցու և ժողովրդի համար, փրկութիւն է դարձել Կիլիկիան, որը կամքել է մեր բուարկութեան նայոց պատմոթեան առաջին հազարամետակը և յետազայ դարերի զարթօնը ու ապա մերօրեան վերածունդի դարաշրջանը:

Կիլիկեան վերածունդեան երեք հարիւր տարիները համեմիսացել են մի բախտորշ ժամանակաշրջան մեր եկեղեցու և ժողովրդի փոխորկայուղ պատմոթեան համապարհի վրայ:

Ցիրաւի, Բագրատունեաց Հայաստանի անկումից յետոյ, կիլիկեան շրջանն է որ բացել է մեր պատմոթեան «Յուսոյ դոները» և ապա երեք դար շարունակ փառքի էջեր արձանագրելոց յետոյ նոր «Յուսոյ դոների» ժառանգութիւնը փոխանցել է մեր եկեղեցուն ու ժողովրդին, որը այս անգամ բուն Հայաստանի հողի վրայ, պիտի շարունակէր իր պատմական առաքելութիւնը, մանաւանդ հայրապետական Մայր Արքուն 1441-ին Սսից ս. Էջմիածին փոխադրուելոց յետոյ:

Կիլիկեան դարաշրջանը ոչ միայն նոր կեանքի է կոչել մայր երկրի տարածքի վրայ շնչառեղան վիճակի հասած նայ եկեղեցին ու հայրապետական Աթոռը, նայ մշակոյն ու դպրութիւնը, ազատ ու ինքնիշխան ապրելու ազգային գիտակցությունը, այլև առաւել ամրապնդել է դրանք, ու անկորնչելի նոր արժեքներով հարստացրել է նայ ստեղծարար հոգու ու մորի գանձարանը:

Արդարեա, կիլիկեան շրջանը նոր ու ինքնատիպ խօսք է ասել և նոր բարձունքներ է նուածել նայ եկեղեցու աստուածաբանական մոածողութեան, փիլիսոփայութեան ու գրականութեան, օրէնսդրութեան, գիտութեան, գրչութեան ու մանրանկարչութեան պատմական զարգացման ու ծաղկման համապարհի վրայ:

Մեր պատմոթեան երկնակամարի վրա՝ հինգերորդ դարի նայոց ուկենացին, կիլիկեան շրջանն է որ պատասխանել է՝ նայոց արծաթեայ դարը կերտելով: Ուկեղարքից որք հարիւր տարիներ յետոյ, արծաթեայ դարով՝ կոթողուն է նայ եկեղեցու և մշակոյն երկրորդ սիների: Եւ այդ երկու սիների

վրայ է լենուել ու նենում է՝ նայ ոգեկանոթեան բոլոր ժամանակների յաղթական կամարը:

Եւ ասելին տակադին, մեր հաւատաւոր ու արիակամ ժողովորդը, իր պատմոթեան կիլիկեան փառքի յիշատակը իր սրտում ամոր ծրարած, արթուն գիտակցոթեամբ սպասել է «Յուսոյ դրների» առաջ, մինչեւ նրանց բացուել են մեր ժամանակաշրջանում, մեր մայր հողամասի վրա, արդի մեր պերճ Հայաստանի ծննդով, եղայրացած ժողովորդների մեծ ընտանիքում, խաղաղոթեան, անվտանգոթեան ու աննախընթաց յառաջադիմոթեան պայմանների մէջ:

Չի կարելի խոր լուզումով շիշել Ստեփանոս Օրբելեանի մարգարեացունց «ողբեր» տասնեւչորսերորդ դարի սեմին, երբ նա ողբում էր բուն Հայաստանի ժողովրդի ու նայոց եկեղեցիների «խորշականար» վիճակը, բայց և երազում էր նրանց վերականգնումը մայր երկրի վրայ:

**«Կանգնել Աստուած զԱթոռ [Հայկեան]... նոր զարդարէ փառօքըն Բին... Տայ մեզ գոչել ձայնի ուժին, Վերջինս է մեծ քան զառաջին»:**

Այսօր, երբ մեր անցեալի հին մագաղաթները լուշում են մեզ՝ վեց հարիբամեակը հայոց կիլիկեան շրջանի վերջատրութեան (1375—1975), մեր սուրբ եկեղեցու և Մայր Աթոռին գիտակցոթեան առաջ յանում է մեծ յիշատակը այդ ժամանակաշրջանի, և փառաւոր ժառանգութիւնը, որ նա ընծայ է թուել մեջ, իր երեք նարիոր և առելի տարիների կենսունակ գոյաւթանաք, ներսուական մարտնչումներով և նոգեաւոր մեծարժեք իրագործութեան ու առաջապես նախապետներու ու վարդապետներու նորութեան մեջարժեք իրագործութեան նորութեան մեջ:

Որով, այս Մեր կոնդակու, նրաւոր ևնք կարդում որ 1975 տարին նոյեմբերի հայ եկեղեցու և Ամենայն Հայոց Հայրապետութեան կիլիկեան շրջանի յիշատակին, որ Հայաստանաց բոլոր եկեղեցիներում տևոլի տնեսնան գոհարանական մաղթանքի արարողութիւններ, ու կենդանի խօսքով ոգեկոչուն, մանաւանդ այն մեծանուն նայրապետներն ու վարդապետները, նոգեաւոր մշակներն ու գիտութեան և արուեստի փարսկետները, որոնք կերտել են նայ ոգեկանոթեան արձաթեայ դարը:

Զերծապէս յանձնարարում ենք, որ այս նոյերական յիշատակի սրանացմանը նաև մեր եկեղեցական-մշակութային կազմակերպութիւնները և նայ մասով, կիլիկեան շրջանի նոգեաւոր մշակույթի արժէքները լայնօրէն ծանօթացնելու համար հայ նոր սերնդին և ազգագի ժողովորդներին, հայերէն և օտար լեզուներով հրատարակութիւններով:

Յարգա՞նք ու պատի հայ եկեղեցու և ժողովրդի նոգու մշտանորդ ուժերին:

Յարգա՞նք ու պատի հայ եկեղեցու և ժողովրդի լուսավառ պատմութեանը և մեր օրերի հայրենական պայծառ վերածննդեան:

Կայ Ձե Ռ

**ՆԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուա կրօնական ի 18-ը մարտի

1974 գրիշական ամի,

և ի սումարիս հայոց ԾԵՒՊ,  
ի մայրամաս սրբոյ Եղիսաբէդի

ՀԱՅ. 767